Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Արևիսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի /9 **դասաժամ**/, **պատմության** /7 **դասաժամ**/, **մաթեմատիկա** /15 **դասաժամ**/, **ֆիզկուլտուրա** /9 **դասաժամ**/,**ֆիզիկա** /2 **դասաժամ**/, **աշխարհագրություն** /2**դասաժամ**/, **ինֆորմատիկա և ԹԳՀԳ** /4 **դասաժամ**/, **կերպարվեստ** /3 **դասաժամ**/, **տեխնոլոգիա** /3 **դասաժամ**/, **երգ** /3 **դասաժամ**/,**հասարակագիտություն**/1**դասաժամ**/, **ՀԵՊ**/1**դասաժամ**/ **ուսուցչի թափուր տեղերի համար**:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի23-ից մինչև սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 **թ սեպտեմբերի** 10 **-ին՝ ժամը** 14:00-**ին**, ՀՀ Սյունիքի մարզի Արևիսի հիմնական դպրոցում, հասցե՝ գ. Արևիս, փողոց1,շ.12: Տեղեկությունների համար զանգահարել 094374753 հեռախոսահամարով: